ՄՈՍԿՎԱՅԻ Մ.Վ.ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԿԻՑ Ա.Հ.ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ГИМНАЗИЯ ИМЕНИ А.Г.ЕРИЦЯНА ПРИ ФИЛИАЛЕ МОСКОВСКОГО
ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ М.В.ЛОМОНОСОВА

✉ ՀՀ, ք. Երևան, 0070, Վարդանանց 17շ. ☎ +374 11 900111 (114) Email: School@msu.am

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇՈՐԻՆԱԿ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (IX դասարան)

ՀԱՐԳԵԼԻ՛ ԱՇԱԿԵՐՏ

Ընդունելության թեստը բաղկացած է 10 առաջադրանքից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5միավոր (ընդամենը՝ 50 միավոր):

Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 60 րոպե:

ՄԱՂԹՈՒՄ ԵՆՔ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ1.Լրացնելբացթողածտառերը.

Ա__բարձիչ, ճե__քել, դար__վածք, անխա__տ, անդրավարտի__, գեղար__, փղ__կալ, անզի__ում, բարբա__, խոնար__:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. Արտագրել՝մեծատառը թողնելով ըստ անհրաժեշտության.

ՏԻԳՐԱՆ ՄԵԾ, ՄԻՋԻՆ ԱՍԻԱ, ՆՈՐ ՆՈՐՔ, ԵՐԵՎԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ՓՈՔՐ ՄԱՍԻՍ, ՄՇՈ ԱՌԱՔԵԼՈՑ, ՎԱՀԱԳՆ ԱՍՏՎԱԾ, ՄԽԻԹԱՐ ԳՈՇ, ԱՆԳԼԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ, ՄԻՋԻՆ ԱՍԻԱ:

_____
_____
_____
_____
_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. Յուրաքանչյուր այունակից ընտրելով մեկական նախածանց և արմատ՝ կազմել վեց ածանցավոր բառ.

ներ	գունավորում
մակ	կախում
ստոր	ուժեղ
ան	կետագիծ
տ	բայահիմք
առ	մասնագետ

_____
_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. Գրել դարձվածքների իմաստները.

ա/ քիթը բարձր_____

բ/ սիրտը ճաքել_____

գ/ ոչ մի դեպքում_____

դ/ պահ մտնել_____

ե/ եփող-թափող_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. Դուրս գրել գոյականները.

Այդ դեպքերին երիտասարդը ականատես է եղել, իսկ գիշերները շարունակել է ժպտալ լուսնին և արհամարհել ժամանակը:

Խոսողը Մարզպետունու որդին՝ Գոռ իշխանիկն էր:

_____
_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. Կազմել տրված գոյականների հոգնակին.

մարդ_____

դպիր_____

ծունկ_____

նստարան_____

աստղ_____

մանկագիր _____

մեծատուն _____

նախագիծ _____
հրաման_____
տիկին_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. Որոշել նշված բայերի *եղանակը, ժամանակաձևը, դեմքը, թիվը, սեռը.*
Մոլորվում է _____
պատմեցի_____
կխրատեք_____
վազի՛ր_____
շտապեի_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. Ընդգծել կապերը.

ա/ Ճանապարհի գրառումները պահում էր կաշվե պայուսակի մեջ:

բ/ Նախարարների և թագավորի միջև հաճախ էին բախումներ լինում:

գ/ Գտնված խաչքարերը եկեղեցու տարածքի համար էին պահվում:

դ/ Դարպասի առաջ նստած ծերունին ուշադիր նայում էր անծանոթներին:

ե/ Մենք խոստացանք գյուղի հիմնահարցերի մասին հոդվածներ գրել:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. Կատարել շարահյուսական վերլուծություն.

ա/ ընդգծել բաղադրյալ ստորոգյալը.

Անհուն ու անընդգրկելի է գիտելիքների ծովը:

բ/ ընդգծել որոշիչը.

Մտահոգ Արամյանը քայլում էր բանուկ ու լայն փողոցով:

գ/ ընդգծել ուղիղ խնդիրը.

Մշակները եռանդով ջրում էին ծաղկած արտերն ու այգիները:

դ/ ընդգծել ձևի պարագան.

Երեխաները ուրախ-ուրախ ցատկոտում են կանաչապատ այգում:

ե/ ընդգծել հատկացուցիչը.

Գետափին պառկած տղաներից մեկը անմիջապես վերցրեց ընկերոջ ակնոցը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ10. Կազմել նախադասություն՝ չխախտելով տրված բառերի շարադասությունը:

ա/ աշխարհ, յոթ, հրաշալիք, մեկը, Քեոփս, բարձրաբերձ, բուրգ:

բ/ Փարիզ, նշանավոր, կոթող, երկնամուխ, Էյֆելյան, աշտարակ։

գ/ Քաղաք, կենտրոն, հավաքվել, մարդ, փոքր, խումբ։

դ/ Նա հեռու տեսնել Ալեքսանդրիա, այրվել, գրադարան կայծկլտալ բոց։

ե/ Շինարարական, տեխնիկա, վերելք, ստեղծել, շատ, կառույց։